

ռերը (եր. 220, 226, Ֆրանսերէն սխալ bon monde 35 երեսում): Լաւ կը լինէր, փոխանակ ստոր դասակարգ, ասել՝ հասարակ դասակարգ: Ի վերջոյ պէտք է լալտենէք, որ տպագրական սխալները անհամար են:

Բացի վիշատակած երկու վէպերից, պ. Զուբարը իւր գրքում տալիս է մի սանտիմենտալ և անկաշիւ վէպիկ՝ «Նա սպասում է դեռ» և երեք ալլաբանական փորձեր—«Մի վարդի պատմութիւնը», «Յիմար ոչխարներ» և «Մոռացած շուն»: Ալլաբանական գրածները շատ դժար են կաշիւում, մինչդեռ Նոքա մեծ ժամանակ և ուղեղի գործողութիւն են պահանջում մարդուց: Պ. Զուբարը գեղեցիկ երեսներ է նւիրում ընթերցողին

«Վարդի պատմութեան» մէջ, կաշիւում խօսակցութիւններ՝ «Յիմար ոչխարներին» մէջ և դարձեալ չէ հասնում իւր նպատակին: Ընթերցողը չէ հասկանում վարդ մօր և վարդ աղջկայ ընական դրութիւնը, չէ կարողանում ըմբռնել թէ ինչպէս գալիքը, պատառելով ոչխարներին, հանգիստ են թողնում ալծերին և ալլն: Վերջացնելով մեր խօսքը, պէտք է ասենք, որ պ. Զուբարը իբրև կեանքի հանգամանքների վիպագրող, հասարակական երևոյթների և անձնաւորութիւնների վիճակը քննող, հացի խնդիրը և բարոյական պահանջների խնդիրը միմեանց հետ չփող՝ լարգելի հիւր է մեր գրականութեան համար:

ՔԼ.

ՆՈՐ ՍՏԱՅԻԱՍ ԳՐԲՆՐ.

Վիլլիամ Շէքսպիր: ՀԱՄԼԷՏ, ողբերգութիւն հինգ արարւածով: Թարգմանութիւն Սենեքերիմ Արծրունու: Հրատարակութիւն Բարսեղ Քամալեանցի: Թիֆլիս, տպ. Ռօտինեանցի, 1889 թ.:

ՈՎ Է ՀՆԱՐԵԼ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ, Թարգմ. Նրուանդ Ղազարեանցի: Թիֆլիս, տպ. Վարդանեանցի. 1888 թ.:

ՏՐԻԳՕ: ՂԱԼԻ ԱԴԱԹՆԵՐԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ.—ձպտորտ քօլատ կտրի: Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի. 1889 թ.:

Բաբայեան Աւետիք, դժբաղդ բժշկականութեան: ԲԱՐԱԿԱՑԱԻ-ԹՕՔԱԽ-ՏԸ ՏԱՐԱԲՈՒԽԻ ՀԻԻԱՆԴՈՒԹԻԻՆ Է. Նորա տարածման առաջն առնելու միջոցներ: Հրատարակական ընթերցանութիւն: Թարգմ. Լևոն Մեղիք-Աղամանի՝ հեղինակի խմբագրութեամբ: Թիֆլ. տպ. Մարտիրոսեանցի 1889.

Арасханіяцъ Ав. д-ръ гос. н. Страсб. ун. Закавказскіе шелкомотальныя заводы. Изданіе Кавк. общ. Сельск. хоз. Тифлисъ, 1889 г.